ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Մեր մոլորակի ամենադաժան վայրերից է այսպես կոչված Մակ Մորդոյի 3 չոր հովիտները, որոնք գտնվում են Անտարկտիդայում: Այս հովիտները կտրուկ լանջերով հսկայական գոգավորություններ են, որոնք առաջացել են հնագույն, սառցադաշտերի աշխատանքով: Անտարկտիդայի այս տարածքը շուրջ 8000 կմ² մակերեսով, ծածկված չէ ոչ սառույցով, ոչ ձյունով: Այստեղ վերջին մի քանի միլիոն տարիների ընթացքում մթնոլորտային տեղումներ, նույնիսկ մի կաթիլ, չի եղել: Այս իսկ պատճառով տարածքը գործնականում զերծ է սառույցից և ձյունից, իսկ գոյություն ունեցող փոքր քանակությամբ ձյունը ոչ թե տեղումների արդյունք է, այլ առաջացել է գերսառեցված ջրային գոլորշուց: Մակ Մորդո նեղուցի ափերին տարածվող 3 չոր հովիտներում օդի ջերմաստիճանը գրեթե չի բարձրանում 0°C–ից, իսկ ամռան միջին ջերմաստիճանը՝ մոտ –14°C է, բացի այդ, տեղական քամին հասնում է 320 կմ/ժ արագության: (սա Երկրի վրա անընդհատ փչող քամիների ամենաբարձր արագությունն է): Այս է պատճառը, որ հովիտները մոտ 8 միլիոն տարի է գործնականում զերծ են սառույցից: Հովիտների դիմաց, Մակ Մորդո նեղուցի հանդիպակած ափին, Ռոս կղզու վրա բարձրանում է Էրեբուս գործող հրաբուխը: